ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"03" հունվարի 2026թ. N 28-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 22 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 22 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

11/3/2026

X

ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԼԵՉՅԱՆ

**ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** Signed by: GHALECHYAN KRISTINE 5504770076 **Ք. ՂԱԼԵՉՅԱՆ**

**ք. Երևան**

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 22

**Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի**

29.10.2026թ. ք. Երևան

2026 թվականի հոկտեմբերի 29-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Դ. Իվանյանը
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Տ. Գասպարյանը
Գ. Խաչատրյանը

***Օրակարգում՝***

1. «Մարտունու համայնքային տրանսպորտ» ՓԲ ընկերության՝ հայտ-պարտավորությամբ հաստատված Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի միասնական երթուղային ցանցի նոր տրանսպորտային միջոցները ներկայացնելու մասին գրությունը:

***Քննարկվեց***

1. «Մարտունու համայնքային տրանսպորտ» ՓԲ ընկերության՝ Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի միասնական երթուղային ցանցի համար ներկայացրած նոր տրանսպորտային միջոցների համապատասխանության հարցը՝ հայտ-պարտավորությամբ հաստատված տրանսպորտային միջոցների:

***Որոշվեց՝***

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու N 1994 որոշման պահանջներով՝

1. Թույլատրել «Մարտունու համայնքային տրանսպորտ» ՓԲ ընկերության Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի ջանների միասնական երթուղային ցանցը համալրել հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

| | մակնիշ | հաշվառման համարանիշ | նույնացման համարը |
|---|---|---|---|
| 1 | Ջակ | 646 HU 61 | LJ166B353T2261879 |
| 2 | Ջակ | 647 HU 61 | LJ166B352T2261887 |
| 3 | Ջակ | 650 HU 61 | LJ166B35XT2261880 |
| 4 | Ջակ | 642 HU 61 | LJ166B356T2261875 |
| 5 | Ջակ | 645 HU 61 | LJ166B355T2261866 |
| 6 | Ջակ | 644 HU 61 | LJ166B357T2261870 |
| 7 | Ջակ | 649 HU 61 | LJ166B350T2261886 |
| 8 | Ջակ | 641 HU 61 | LJ166B357T2261884 |
| 9 | Ջակ | 648 HU 61 | LJ166B350T2261886 |
| 10 | Ջակ | 640 HU 61 | LJ166B357T2261867 |
| 11 | Ջակ | 643 HU 61 | LJ166B354T2261874 |
| 12 | Ջակ | 651 HU 61 | LJ166B351T2261878 |
| 13 | Ջակ | 656 HU 61 | LJ166B357T2261822 |
| 14 | Գազ A65R52-500 | 653 HU 61 | X96A65R52T1046281 |
| 15 | Գազ A65R52-500 | 655HU 61 | X96A65R52T1046340 |
| 16 | Գազ A65R52-500 | 652 HU 61 | X96A65R52T1046644 |
| 17 | Գազ A65R52-500 | 657 HU 61 | X96A65R52T1046676 |
| 18 | Գազ A65R52-500 | 654 HU 61 | X96A65R52T1046258 |
| 19 | Գազ A65R52-500 | 658 HU 61 | X96A65R52T1046730 |

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Դ. Իվանյան

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Տ. Գասպարյան

Գ. Խաչատրյան